է կազմում: Լռ-ների չուրջը հարաւ արեւմուտքից արեւելք Վաղուկ լեռները տարածուելով՝ հիւսիս-արեւելք մտնում են Ջիարէթ, Նասխնելերի, Սազանլի, Սարփ-Կայա, Բեշիչ-Կայա, Բրքլար (քառասուն գից), Զափանց, Սօզօրնի, Եալազուզ, Վարշամ Բէգ, Պարխալ (Բալխար). Մթացկարա, Քաչքար, Ալթի-Պարմազ, Մարսիս (Մասիս) Գուլիխանա, Կվախիդ, Բիւքիւրդ-Դաղ, Դէմիր-Կրան, Աչար-Բաշի, Պալ-Նագիկ-Թէփէ, Փատաջուր, Պալրգլի, Ցկարխատի, Սաուզուրգի, Եանդունլի, Զալոնա, Կվախերխի, Բեհլեվան եւ Կարաչայվար, որոնք տարածւում են դէպի Սեւ ծովի ափերը, մինչեւ Սարփ եւ Մաքրիալի նաւամատոյցները: Աջարայի եւ Գուրիայի մէջ ջրբաժան գիծ են կազմում հետեւեալ լռները, արեւմուտքից-արեւելք Նարաճիրի, Աջարիս-Խեւի, Զավկիմթա, Մորվէլ, Կալվա, Փերանգա, Խինօ, Տագինաուրի, Գատարագետի, Գատի-Մերիս, Կուրչխլիս-Ցկարա, Սակուլա-Փէրդի, Ցխլից-կարի, որը մտնում է Զուրուխ Նարին-Բաշի լռ-ին: Այս եռանկեան հիւսիս-արեւելեան ծայրը բռնած է Զուրուխ-Նարին-Բաշի, հարաւ-արեւելեան ծայրը Սօղանլու անտառապատ լեռները եւ հարաւ-արեւմտեան ծայրը Վաղուկ լռ.ն:

1. Այս եռանկիւնու միջին մասից սկսւում է Ճորոխը, ուղղւում է նախ հարաւային կողմով ուղղակի դէպի արեւ-